



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N \_\_\_\_\_

\_\_\_\_\_ 2012 թ.

Քաղաքացի Ժաննա Քետյանին  
հասցե՝ ք.Երևան, Խանջյան 7, բն 48

Կից ուղարկվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 27.03.2012թ. թիվ 11/6 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  
Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/6

27 մարտի 2012թ.

Քննարկվեց քաղաքացի ժաննա Քետյանի 10.03.2012թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 05.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410366 վարչական ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցների կողմից 27.02.2012թ-ին կազմվել է թիվ 1410366 արձանագրությունը, որում մասնավորապես արձանագրվել է, որ քաղաքացի ժաննա Քետյանը՝ բնակվող ք.Երևան, Խանջյան 7 շենք, բն. 48 հասցեում, չունենալով պետական գրանցում (վկայական), ինչպես նաև համապատասխան հարկային փաստաթղթեր, մանրածախ առևտրի գործունեություն է իրականացրել ք.Երևան, Խանջյան փողոցին հարակից <Վերնիսաժ> տոնավաճառում: Ըստ նրա 14 փետրվարի 2012թ-ին տրված բացատրության, սկսած 2009թ-ի սկզբից մինչև բացատրություն գրելը, համախառն եկամուտ է ունեցել 60 000 դրամ ամեն ամիս:

Սույն խախտումն առաջացնում է պատասխանատվություն համաձայն <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 8-րդ բաժնի պետը 05.03.2012թ-ին ընդունել է թիվ 1410366 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով կիրառվել են <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցները: Արդյունքում վարչական ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1322000 դրամ, այդ թվում՝ <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանք 1110000 դրամ, <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված տուգանք 220000 դրամ:

Քաղաքացի ժաննա Քետյանի գանգատում մասնավորապես նշված է.

Ըստ գանգատի, քաղաքացի ժաննա Քետյանը հանդիսանում է 72 տարեկան թոշակառու, որին մեղադրում են այն բանի համար, որ 2009 թվականից <Վերնիսաժ> տոնավաճառում վաճառում է ապրանքներ և պետությունից թաքցրել է ամսեկան եկամուտը՝ գումարով 60 000 դրամ: Արդյունքում, պետք է վճարի երեք տարիների համար հաշվարկված տուգանքը: Սակայն, ՕՀՎ աշխատակիցները միզուցե տեղյակ չեն, որ նա գործունեություն է իրականացրել միայն շաբաթ և կիրակի օրերին, տեղի համար վճարումը կատարվում է չեկերով, որոնք թե իրեն և թե վերնիսաժի մնացած կանգնողներին տրամադրվում է տոնավաճառի ղեկավարության կողմից:

Ըստ գանգատի, քաղաքացի ժաննա Քետյանը վաճառում է միայն օգտագործված ապրանքներ (ապսեներ, սափորներ): Ժաննա Քետյանը չի կարող հայտնել իր միջին ամսեկան եկամտի չափը, քանի որ վատ առևտրի հետևանքով ամսեկան եկամուտը կարող է տատանվել 5000 դրամից մինչև 60 000 դրամ:

Ժաննա Քետյանը ցանկանում է նշել նաև, որ չի հանդիսանում անհատ ձեռնարկատեր և որքանով որ իրեն հայտնի է, վերնիսաժում միայն շաբաթ և կիրակի օրերին օգտագործված ապրանքներ վաճառող անձինք ազատված են հարկային պարտավորություններից:

Ըստ ժաննա Քետյանի հարց է առաջանում, թե ինչու տուգանք է առաջադրվել է միայն իրեն, այն դեպքում, երբ վերնիսաժում առևտուր իրականացնողների մոտ 80%-ը գտնվում են նույն կարգավիճակում:

Ժաննա Քետյանը խնդրում է օրենքի շրջանակներում ուսումնասիրել իր գործը և տալ արդարացի լուծում:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ժաննա Քեսոյանի և վերոգրյալ արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով գանգատին առնչվող նյութերը և ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

« քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Այսինքն, գործունեությունը որպես ձեռնարկատիրական որակելու համար պարտադիր պայման է հանդիսանում շահույթ ստանալու նպատակի առկայությունը:

Հանձնաժողովը գտնում է, որ ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը հաստատված համարելու համար պետք է հիմնավորվեր քաղաքացի ժաննա Քեսոյանի կողմից շահույթ ստանալու նպատակով հիշատակված ապրանքների ձեռք բերման և իրացման փաստը: Այսինքն, քաղաքացի ժաննա Քեսոյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելու հանգամանքը հաստատված համարելու համար պետք է պարզվեր և ապացուցվեր, որ ժաննա Քեսոյանն ապրանքները ձեռք է բերել դրանք իրացնելու և շահույթ ստանալու նպատակով:

Հարկ է նշել, որ ձեռնարկատիրական գործունեության հասկացության մեկնաբանությունը տվել է «Վճռաբեկ դատարանն իր թիվ 1161(ՏԴ) քաղաքացիական գործով 01.08.2007 թվականի որոշմամբ: Նշված որոշման մեջ «Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

<Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացու կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս, անհրաժեշտ է օրենքով սահմանված պարտադիր հատկանիշների առկայությունը որոշել մասնավորապես հետևյալ հանգամանքները բացահայտելուց հետո.

1. արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,
2. արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,
3. արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,

4. արդյո՞ք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի է համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, ապրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը,

5. արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին,

6. այլ առանձնահատուկ հատկանիշներ>:

Վերոգրյալից հետևում է, որ անձի գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար անհրաժեշտ է որպեսզի դրանում առկա լինեն «Վճռաբեկ դատարանի որոշմամբ նշված բոլոր հանգամանքները:

Քննարկվող դեպքում չի պարզվել և բացահայտվել, թե քաղաքացի ժաննա Քեսոյանի գործունեության մեջ առկա են արդյոք վերը թվարկված հանգամանքները: Ժաննա Քեսոյանի գործունեությունը որակվել է որպես ապօրինի ձեռնարկատիրություն հիմք ընդունելով միայն այն հանգամանքը, որ նրա կողմից իրացվել են ապրանքներ:

« քաղաքացիական օրենսգրքի և «Վճռաբեկ դատարանի նշված որոշման իմաստով ձեռնարկատիրական գործունեության գլխավոր նպատակներից է հանդիսանում շահույթ ստանալու նպատակը: Այսինքն, արդյոք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով, թե ոչ: Նշված հանգամանքը քննարկվող դեպքում չի պարզվել: Ինչից հետևում է, որ խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> «Օրենքի 37-րդ հոդվածի պահանջները, այն է՝

Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործիբոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա չեն բավարար ապացույցներ, որոնք կհիմնավորեին, որ ժաննա Քետյանի գործողությունները հետապնդել են շահույթ ստանալու նպատակ: Ավելին, քննարկման ընթացքում չապացուցվեց այն հանգամանքը, որ ժաննա Քետյանը, վաճառելով ապրանքներ ստացել է շահույթ:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ առկա չեն բավարար հիմքեր և ապացույցներ քաղաքացի ժաննա Քետյանի գործունեությունը որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն որակելու համար:

Բացի այդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն. «Սույն հոդվածով նախատեսված ապօրինի կամ արգելված գործունեության իրականացման համար տուգանքների կիրառման առումով ապօրինի կամ արգելված գործունեություն իրականացնողի իրացման շրջանառության (համախառն եկամտի) որոշման անհնարինության դեպքում իրացման շրջանառությունը (համախառն եկամուտը) և ակտիվների արժեքները որոշվում են հարկային մարմինների կողմից՝ կիրառելով սույն օրենքի 22 հոդվածի դրույթները»:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ժաննա Քետյանի իրացման շրջանառությունը հաշվարկելիս պետք է կիրառվեին «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթները հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ժաննա Քետյանի իրացման շրջանառությունը և համապատասխան պարտավորությունները հաշվարկվել են բացառապես ժաննա Քետյանի բացատրության հիման վրա: Մասնավորապես, ժաննա Քետյանի իրացման շրջանառությունը հաշվարկելիս հիմք է ընդունվել վերջինիս կողմից տրված բացատրությունում արտացոլված տեղեկությունն այն մասին, որ նրա ամսական եկամուտը կազմում է 60 000 դրամ:

Քննարկման ընթացքում ժաննա Քետյանը նշեց, որ բացատրությունը գրվել է հուզական ծանր վիճակում, քանի որ մոտ 6-7 ժամ գտնվել է ՕՀՎ աշխատակիցների սենյակում: Վերջինս պնդեց, որ իր կողմից բացատրությունում ամսական եկամտի վերաբերյալ տեղեկությունները իրական չեն, հետևապես դրանք չեն կարող հիմք հանդիսանալ պարտավորությունների առաջադրման համար:

Տվյալ դեպքում, ելնելով ժաննա Քետյանի կողմից իրականացված գործունեության առանձնահատկություններից, չի կարող հիմնավորված համարվել վարչական ակտով կիրառված այն սկզբունքը, որ երեք տարուց ավելի ժամանակհատվածում ժաննա Քետյանի իրացման շրջանառությունը յուրաքանչյուր ամիս կազմել է միևնույն գումարը: Հետևապես ժաննա Քետյանի իրացման շրջանառության իրականին մոտ ծավալները պարզելու նպատակով իրականացված վարչական վարույթի շրջանակներում իրացման շրջանառությունը պետք է որոշվեր՝ կիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել **ԿԱ ՊԵԿ ՕՀԿ** 05.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410366 վարչական ակտը:



Հանձնաժողովի նախագահ

S.ԲԱՐՍԵԴՅԱՆ